

**ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ,
Վարկ No. 7751-AM**

Անվանումը. Ընկնող քաշով դեֆլեկտոմետրի (ԸԲԳ) գնում «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի համար

ՀՆՀ No: ICB-FWD-1/2010

1. Սույն Հայտերի Ներկայացման Հրավերը հաջորդում է սույն Ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, որը գետնդրվել է «Development Business» և «DgMarket» էլեկտրոնային էջերում 2009թ. հունիսի 9-ին:
2. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) ստացել է վարկ «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման» ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորման ծախսերը հոգալու համար և նախատեսում է այդ վարկի գումարից վճարումներ կատարել Պայմանագրի ներքո «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի համար Ընկնող քաշով դեֆլեկտոմետր (ԸԲԳ) գնելու համար:
3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնել փակված հայտեր իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից՝ Ընկնող քաշով դեֆլեկտոմետր մատակարարելու համար:
4. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված «Ուղեցույցներ: ՄՋՎԲ վարկերի և ՄՋԸ փոխառությունների շրջանակներում գնումներ»-ով (2004թ. մայիս, 2006թ. հոկտեմբերին լրամշակված խմբագրությամբ) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Միջազգային Մրցակցային Հայտարկի եղանակով: Մրցույթը բաց է Ուղեցույցներում սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:
5. Ծահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից (դիմել գնումների գլխավոր մասնագետ՝ պարոն Դ. Հայրապետյանին, հեռ: +374 10 580 523, էլ.փոստ: dhairapetyan@transportpiu.am) և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեյում՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 17:00:
6. Որակավորման չափանիշները ներառում են.

ա) Հայտատուն պետք է առնվազն երեք տարի ներգրավված լինի Ընկնող քաշով դեֆլեկտոմետրի արտադրման/մատակարարման գործում:

բ) Հայտատուն պետք է տրամադրի հաստատուն տեղեկություններ վերջին երկու տարիների ընթացքում իր կողմից իրականացված Ընկնող քաշով դեֆլեկտոմետրի մատակարարման առնվազն երկու մասնատիպ պայմանագրի վերաբերյալ: Տեղեկությունը պետք է ներառի. մատակարարված ապրանքների նկարագրությունը, գնորդի/պատվիրատուի անունը, գնորդի/պատվիրատուի ներկայացուցչի անունը, հասցեն, հեռախոսը/ֆաքսը, էլեկտրոնային հասցեն:

Նախապատվության տոկոսաբաժին չպետք է կիրառվի տեղական արտադրության որոշակի ապրանքների վրա: Լրացուցիչ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Մրցութային փաստաթղթերում:

7. Հետաքրքրված հայտատուների կողմից մրցութային փաթեթը ամբողջապես անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ կամ 150 ԱՄՆ դոլար գումարի չափով չհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին՝

Ծահառու. «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ տնօրինություն» ՊՈԱԿ

ՀՀ դրամի համար. Հաշիվ # 1810052104953311

ԱՄՆ դոլարի համար. Հաշիվ # 1810001104923311

Հայկական զարգացման բանկ, ՀՀ, Երևան

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով՝ Երևանից դուրս առաքելու համար, և առաքիչի միջոցով Երևան քաղաքի տարածքում: Երևանից դուրս առաքելու դեպքում տեղափոխման համար կգանձվի լրացուցիչ 100,000 ՀՀ դրամ կամ 250 ԱՄՆ դոլար:

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև կամ **2010թ. հոկտեմբերի 5-ի ժամը 15:00-ը (Երևանի ժամանակով)**: Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կներժվեն: Հայտերը կբացվեն անմիջապես նույն օրը **2010թ. հոկտեմբերի 5-ի ժամը 15:05-ին (Երևանի ժամանակով)** մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեով:

Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն Մրցույթի ապահովման երաշխիքով, որի գումարն է **6000 (վեց հազար) ԱՄՆ դոլար կամ համարժեք գումար ազատ փոխարկելի արժույթով**:

9. Վերևում հիշատակվող հասցեն է.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ, սենյակ N 312ա

Պրն. Դավիթ Հայրապետյան, Գնումների գլխավոր մասնագետ

Հայաստան, Երևան, 0010, Նալբանդյան 28

Հեռ/ֆաքս.՝ (+37410) 580523, էլ. փոստի հասցե՝ dhairapetyan@transportpiu.am, atp@arminco.com